

**ՀՈՒՇԱԳԻՐ**  
**ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԵՎ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**  
**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հունգարիայի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով կազմակերպված հանցավորության ոլորտում զարգացումները և դրա դրսևորումները, որոնք ունեն միջազգային բնույթ, և դրանց սերտ կապն այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են մարդկանց առևտուրը և անօրինական միգրացիան, պատրաստակամ են և ցանկանում են համագործակցել՝ կանխարգելելու և արդյունավետ կերպով արձագանքելու մարդկանց առևտրին և անօրինական միգրացիային, ինչպես նաև ամրապնդելու և առաջ քաշելու կայունացման միտումները՝ նպատակ ունենալով նպաստել մարդկանց առևտրի և անօրինական միգրացիայի խոչընդոտման, կանխարգելման և հետապնդման ոլորտում գործողությունների արդյունավետությանը,

քննարկելով համագործակցության ամրապնդման հարցը՝ օրինականությունը երաշխավորելու և քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով,

Համաձայնեցին հետևյալի մասին.

**Հոդված 1**

Կողմերն իրենց լիազորությունների շրջանակում իրավական օգնություն կտրամադրեն միմյանց՝ սույն Հուշագրի և իրենց ազգային օրենսդրության ու իրենց պետությունների մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան:

**Հոդված 2**

Սույն Հուշագիրը կիրարկելու ընթացքում Կողմերը միմյանց հետ կհաղորդակցվեն անմիջականորեն, եթե իրենց պետությունների մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

**Հոդված 3**

Կողմերն իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումները կկազմեն իրենց պետական լեզուներով՝ դրանց կցելով հայցող Կողմի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված անգլերեն թարգմանությունները:

#### **Հոդված 4**

Իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը կատարելիս Կողմերը կիրառում են իրենց ազգային օրենսդրությունը: Հայցող Կողմի խնդրանքով կարող են կիրառվել նաև այդ Կողմի քրեադատավարական նորմերը, եթե դրանք չեն հակասում հայցվող Կողմի օրենսդրությանը, և եթե հարցումը պարունակում է բոլոր այն հիմքերը, որոնք անհրաժեշտ են այդ նորմերի կիրառման համար: Իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցման կատարումը կարող է մերժվել, եթե այն ունի քաղաքական բնույթ, կամ եթե նման օգնության տրամադրումը կարող է վնաս պատճառել Կողմի ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարարական կարգին կամ այլ շահերին:

#### **Հոդված 5**

Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ մյուս Կողմից ստացված նյութերը կօգտագործվեն միայն նախատեսված նպատակներով: Տրամադրված նյութերի օգտագործումը չհամաձայնեցված նպատակներով հնարավոր է միայն շահագրգիռ Կողմի համաձայնությամբ:

Յուրաքանչյուր Կողմ, իր օրենսդրությանը համապատասխան, պետք է ապահովի գաղտնիության այնպիսի աստիճան, որը պահանջում է մյուս Կողմը:

#### **Հոդված 6**

Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված բոլոր վեճերը լուծվում են խորհրդակցությունների միջոցով:

#### **Հոդված 7**

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ: Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Հուշագրի 9-րդ հոդվածին համապատասխան և դառնում են դրա անբաժանելի մասը:

#### **Հոդված 8**

Սույն Հուշագրի դրույթները չեն շոշափում Հունգարիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող այլ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները:

#### **Հոդված 9**

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումն ստանալու օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

## **Հողված 10**

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու օրվանից մեկ ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2007 թվականի հուլիսի 6-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հունգարերեն, հայերեն և անգլերեն. բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

**Հունգարիայի Հանրապետության  
գլխավոր դատախազության  
կողմից՝**

**Հայաստանի Հանրապետության  
գլխավոր դատախազության  
կողմից՝**